

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանը հայտարարում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի դասական աճուրդի:

ԼՈՏ 1 - «Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից՝ 04-094-0409-0007 կադաստրային ծածկագրով, 0.05883 հա մակերեսով այլ հողատեսք /0.054980 հա վարելահող, 0.003850 հա այլ հողատեսք/ գործառնական նշանակության հողամաս: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-01-23:

Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել ընդհանուր՝ 4.000.000 ՀՀ դրամ: Աճուրդը կայանալու է 2023 թվականի փետրվարի 21-ին ժամը 12:00-ին:

ԼՈՏ 2 - «Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի, Երևան-Վաղարշապատ խճուղի 64/1 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, 04-082-0063-0123 կադաստրային ծածկագրով, 0.0108 հա մակերեսով հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս, մեկ հարկանի առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-02-23:

Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել ընդհանուր՝ 1.300.000 ՀՀ դրամ:

Աճուրդը կայանալու է 2023 թվականի փետրվարի 21-ին ժամը 14:30-ին:

ԼՈՏ 3 - «Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի Երևանյան փողոց 9/2 հասցեում գտնվող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, 04-069-0101-0081 կադաստրային ծածկագրով, 0,0152 հա մակերեսով հողամաս, որից 121.6 քմ մակերեսով հողամասը մեկ հարկանի շինություն՝ առևտրի և սպասարկման օբյեկտ կառուցելու, 30.4քմ մակերեսով հողամասը՝ սպասարկման նպատակով: Աճուրդի ծածկագիրն է՝ ՀԱ-03-23:

Աճուրդի մեկնարկային գին է սահմանվել 1.800.000 ՀՀ դրամ:

Աճուրդը կայանալու է 2023 թվականի փետրվարի 21-ին ժամը 15:00-ին:

Հողամասերի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ սերվիտուտներ)՝ չկան: Առկա է ճանապարհ: Շրջակա միջավայրերի և պատմամշակութային հուշարձանների պահպանության, բնապահպանական և հողերի պահպանության միջոցառումներ՝ չկան:

Աճուրդին մասնակցել ցանկացող անձինք աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին կարող են ծանոթանալ «Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում, ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն՝ ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդի նախավճարի չափը կազմում է աճուրդի առարկայի մեկնարկային գնի 50 տոկոսը: քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Աճուրդում հաղթող կճանաչվի առավելագույն գին առաջարկողը:

Աճուրդները կայանալու են ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի շենքի 2-րդ հարկում:

Աճուրդի պայմանների մանրամասներին ծանոթանալու ու հայտ ներկայացնելու համար դիմել՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարան /ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գ. Փարաքար, Նաիրի 42, 1-ին հարկ, քաղաքաշինության և հողաշինության բաժին/:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ մինչև 2023 թվականի փետրվարի 15-ը, ժամը 18:00-ը: Հեռ.՝ 0231-6-00-42:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ